ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՎԱԳ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) կրթության, մշակույթի և սպորտի վարչության (այսուհետ՝ Վարչություն) ավագ մասնագետ (ծածկագիրը՝ 93-30.4-Մ4-4)

1.2. Ենթակա և հաշվետու է

Վարչության ավագ մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Վարչության պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության ավագ մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության գլխավոր մասնագետը:

1.4. Աշխատավայրը

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, ք. Արմավիր, Աբովյան 71

2. Պաշտոնի բնութագիրը

2.1. Աշխատանքի բնույթը, իրավունքները, պարտականությունները

1. մասնակցում է Աշխատակազմում ստացված քաղաքացիների դիմումների, բողոքների քննարկմանը և դրանց ընթացքը օրենքով սահմանված կարգով լուծում տալու աշխատանքներին.
2. մասնակցում է Վարչության պետին կատարած աշխատանքների մասին ընթացիկ և տարեկան հաշվետվություններ ներկայացնելու աշխատանքներին.
3. մասնակցում է մարզի տարածքում կրթության, մշակույթի և սպորտի բնագավառներում պետական քաղաքականության իրականացման ապահովմանը.
4. մասնակցում է հրավիրվող խորհրդակցությունների ու սեմինարների

նախապատրաստմանը և կազմակերպմանը.

5. մասնակցում է մշակույթի և սպորտի բնագավառներում տիրող իրավիճակի վերաբերյալ մշտադիտարկման իրականացմանը.

6. մասնակցում է մշակույթի և սպորտի բնագավառներին առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման պրակտիկայի և կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացմանը.

7. մասնակցում է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի մշակմանը, կազմմանը և իրականացմանը.

8. իրականացնում է մշակույթի և սպորտի ոլորտների զարգացման տարեկան և հեռանկարային ծրագրերի նախագծերի մշակումը և ոլորտը համակարգող Մարզպետի տեղակալի քննարկմանը ներկայացման աշխատանքներին, ինչպես նաև ուսումնամեթոդական բազայի ամրապնդման վերաբերյալ միջոցառումների իրականացումանը.

9. մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությանը աջակցության տրամադրմանը՝ մշակույթի և սպորտի ոլորտներում.

10. մասնակցում է տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող իրավական հսկողության աշխատանքներին.

11. մասնակցում է մարզամշակութային միջոցառումների և մրցույթների կազմակերպման ախշատանքներին.

12. մասնակցում է հանրապետական և մարզային միջոցառումների, սպարտակիադաների, մրցաշարերի անցկացմանը աջակցության ցուցաբերմանը.

13. մասնակցում է մանկական երաժշտական և գեղարվեստի դպրոցների գործունեությանը աջակցության ցուցաբերմանը.

14. մասնակցում է պետական, ազգային և այլ տոների, զանգվածային միջոցառումների անցկացմանը, ազգային ավանդական ծեսերի վերականգնմանը աջակցության ցուցաբերմանը.

15. մասնակցում է համահայկական խաղերի, օլիմպիադաների, սպարտակիադաների, սպորտային մրցաշարերի կազմակերպմանը աջակցության ցուցաբերմանը.

16. մասնակցում է մարզային մարզամշակութային մասսայական մրցաշարերի և միջոցառումների կազմակերպմանը.

17. իրականացնում է պրոֆեսիոնալ և ինքնուս նկարիչների ցուցահանդեսների, ինչպես նաև ինքնագործ և պրոֆեսիոնալ պարային, ժողովրդական համույթների, թատերական խմբերի ներկայացումների կազմակերպմանը աջակցության ցուցաբերում.

18. մասնակցում է պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ օրենքով սահմանված լիազորությունների իրականացնմանը.

19. մասնակցում է մարզում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ծրագրերի իրագործման ուղղությամբ հսկողության իրականացմանը.

20. մասնակցում է մարզական կազմակերպությունների հանրապետական առաջնություններին, միջազգային մրցումներին մարզի և համայնքների մարզիկների ու թիմերի մասնակցության կազմակերպմանը աջակցության ցուցաբերմանը.

21. մասնակցում է ֆիզկուլտուրային-առողջարարական և տարբեր մարզաձևերի մարզային մարզական միջոցառումների և տոնահանդեսների կազմակերպման աշխատանքներին.

22. մասնակցում է մարզական կարգերի և կոչումների շնորհման համար միջնորդագրերի նախագծերի կազմման և ներկայացման աշխատանքներին.

23. մասնակցում է, հանրապետական առաջնություններին և միջազգային մրցաշարերին մասնակցության նպատակով, մարզի, համայնքների և մարզական

կազմակերպությունների հավաքական թիմերին աջակցության ցուցաբերմանը.

24. մասնակցում է մանկապատանեկան սպորտի բնագավառում պետական իրավասու մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների համատեղ և համաձայնեցված գործունեությանը աջակցության ցուցաբերմանը.

25. մասնակցում է հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպմանը և անցկացմանը.

26. իրականացնում է մարզում երիտասարդության հետ տարվող աշխատանքների իրականացմանը աջակցության ցուցաբերում.

27. մասնակցում է Մարզի մշակույթի և սպորտի բնագավառների ռազմավարության, զարգացման ծրագրերի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության երկարաժամկետ և միջնաժամկետ ռազմավարական ծրագրերին համահունչ, մշակման ախատանքներին.

28. մասնակցում է ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանման, տարածման և զարգացման աշխատանքների կազմակերպմանը:

Իրավունքները՝

1. մասնակցել Մարզի պետական կրթական հաստատություններում կրթական համակարգում բարեփոխումներ կատարելու վերաբերյալ քննարկումների, սեմինարների.
2. նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններից պահանջել անհրաժեշտ տեղեկատվություն և համապատասխան առաջարկություն ներկայացնել կրթական համակարգի բարելավման ուղղությամբ.
3. մարզային շահագրգիռ մարմինների հետ իրականացնել պետական, ազգային ու այլ տոների հետ կապված զանգվածային միջոցառումների իրականացման վերաբերյալ

համատեղ քննարկումներ.

4. պահանջել Մարզի տարածքի պետական մշակութային և ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպություններից տեղեկատվություն իրենց գործունեության վերաբերյալ և ներկայացնելու առաջարկություններ և դիտարկումներ.

5. Մարզի տարածքում գործող երաժշտական, արվեստի դպրոցների, թատրոնների, պետական ինքնագործ համույթների, գրադարանների, թանգարանների, ակումբների, խմբերի գործունեության բարելավման վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ.

6. Մարզի երիտասարդության հետ կազմակերպելու քննարկումներ, հանդիպումներ.

7. պահանջել տեղեկատվություն և կազմակերպել քննարկումներ Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների, համայնքների, մարզադպրոցների մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի վերաբերյալ, հանրապետական մարզական միջոցառումների տարածաշրջանային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման համար.

8. համագործակցել Մարզի տարածքում ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությունների հետ:

Պարտականությունները՝

1. նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացնել կրթական և դաստիարակչական ծրագրերի իրականացման՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխանության ուսումնասիրություն և արձանագրել թերությունները.

2. Մարզային համապատասխան միջոցառումների անցկացման համար համապատասխան կազմակերպությունների հետ մշակել միջոցառումների պլան և ըստ ժամանակացույցի կազմակերպել միջոցառումների նախապատրաստական և անցկացման աշխատանքները.

3. հետևողականություն ցուցաբերել Մարզում ավանդական ազգային ծեսերի վերականգնման ու տարածման ուղությամբ կազմակերպերպվող միջոցառումներին,

համագործակցել Մարզի հասարակական կազմակերպությունների, եկեղեցու հետ.

4. համագործակցել Մարզի տարածքի ոչ պետական մշակութային և սպորտային կազմակերպությաունների հետ, մշակել համատեղ միջոցառումների պլան, իրականացնել կազմակերպությունների գործունեության օրենսդրությանը համապատասխանության ուսումնասիրություն և առաջարկություններ ներկայացնել գործունեության բարելավման ուղղությամբ.

5. աջակցել նպաստավոր պայմանների ստեղծմանը՝ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման. ազգային արժեք համարվող մշակութային նյութական և ոչ նյութական ժառանգությունների պահպանման, տարածման և զարգացման ուղղությամբ.

6. ուսումնասիրել Մարզի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում իրականացված ծրագրերը, կազմակերպել միջոցառումներ երիտասարդության ներուժի, տաղանդավոր երիտասարդների բացահայտման նպատակով.

7. աջակցել Մարզի դպրոցականների շրջանում տարբեր մարզաձևերից, ռազմամարզական խաղերի տարածաշրջանային և մարզային փուլերի մրցույթների կազմակերպմանը և անցկացմանը.

8. նախապատրաստել Վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծեր, առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցագրեր, եզրակացություններ:

9. ուսումնասիրել Վարչություն հասցեագրված դիմումները, բողոքները և առաջարկությունները:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջները

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն.

3.2. Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ.

3.3. Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն մեկ տարվա ստաժ կամ մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ մշակույթի կամ սպորտի բնագավառում՝ մեկ տարվա աշխատանքային ստաժ.

3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ

Ընդհանրական կոմպետենցիաներ՝

1. Խնդրի լուծում
2. Հաշվետվությունների մշակում
3. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
4. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիաներ՝

1. Ծառայությունների մատուցում
2. Ժամանակի կառավարում
3. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակ

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության համար:

4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների վերջնարդյունքի ապահովման մասնակցության և միջանկյալ արդյունքի ստեղծման և ապահովման և մասնագիտական օժանդակության շրջանակներում:

4.3. Գործունեության ազդեցությունը

Ունի ազդեցություն մասնագիտական աշխատանքների ապահովման և որոշակի մասնագիտական գործառույթների իրականացման շրջանակներում:

4.4. Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասության շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի կառուցվածքային այլ ստորաբաժանումների, ինչպես նաև համապատասխան մարմնից դուրս մասնագիտական հարցերով շփվում է այլ մարմինների և ներկայացուցիչների հետ:

4.5. Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրների լուծման մասով տալիս է մասնագիտական առաջարկություն և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: